

«Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերությունում բնապահպանական, սոցիալական, առողջապահական և տեխնիկական անվտանգության բնագավառում կառուցվածքային միավորների միջև գործառույթների բաշխում

Պատասխանատու	Գործառույթ
<p>Բնապահպանական, առողջապահական և տեխնիկական անվտանգության աշխատանքները համակարգող խորհուրդ</p>	<p>Քննարկում է ընկերության գործունեությունը աշխատանքի անվտանգության, բնապահպանական, սոցիալական և առողջապահական ազդեցության տեսանկյունից միջազգային առաջադեմ ստանդարտներին, մասնավորապես՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի գործունեության ստանդարտներին համապատասխանեցման և այդ նպատակով կառավարման անհրաժեշտ համակարգերի ներդրման աշխատանքների ընթացքը, այդ ուղղությամբ ընկերության համապատասխան ստորաբաժանումների և աշխատակիցների անելիքները</p> <p>Սահմանում է բնապահպանական և տեխնիկական անվտանգության նպատակներ և խնդիրներ, քննարկում դրանց լուծման եղանակներն ու սահմանում ռեսուրսները</p> <p>Վերանայում է բնապահպանական և տեխնիկական անվտանգության քաղաքականությունն ու ընթացակարգերը</p> <p>Քննարկում է բնապահպանական և տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրական փոփոխությունները և դրանց հնարավոր ազդեցությունը ընկերության գործունեության վրա</p> <p>Քննարկում է բնապահպանական, տեխնիկական անվտանգության և սոցիալական գործողությունների պլանի կատարման և համապատասխան կառավարման համակարգերի ներդրման աշխատանքների վերաբերյալ բնապահպանական և տեխնիկական անվտանգության բաժինների կողմից ներկայացվող հաշվետվությունները, մշակում միջոցառումներ՝ նշված աշխատանքների պատշաճ կատարման, առկա թերությունների վերացման և միջազգային առաջադեմ ստանդարտներին համապատասխանեցման նպատակով</p>
<p>Կայուն զարգացման վարչության պետ</p>	<p>Համակարգում է աշխատանքի անվտանգության, բնապահպանական, սոցիալական և առողջապահական տեսանկյուններից ընկերության գործունեությունը միջազգային առաջադեմ ստանդարտներին համապատասխանեցման և այդ նպատակով կառավարման անհրաժեշտ համակարգերի ներդրման աշխատանքները</p> <p>Ապահովում է բնապահպանական, առողջապահական և տեխնիկական անվտանգության աշխատանքները համակարգող խորհրդի աշխատանքների բնականոն ընթացքը</p>
<p>Սոցիալական աջակցության ծառայության պետ</p>	<p>Ապահովում է ազդակիր համայնքների հետ ընկերության բնականոն համագործակցությունը, այդ թվում նաև՝ համայնքների բնակիչների կողմից բարձրացված հարցերի քննարկումը ու լուծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, համայնքների բնակիչների հետ հետադարձ կապի պահպանումը</p>
<p>Գլխավոր տնօրենի մամուլի խոսնակ</p>	<p>Ապահովում է ընկերության գործունեության վերաբերյալ շահառուներին պարբերաբար իրազեկումը, շահառուների հետ հանդիպումների կազմակերպումը, վերջիններիս ընթացքում բարձրացված հարցերի՝ ընկերության համապատասխան ստորաբաժանումների մասնակցությամբ քննարկումներն ու դրանց լուծման ուղղությամբ կատարվող աշխատանքների վերաբերյալ շահառուների հետ կապը</p>
<p>Բնապահպանական և տեխնիկական անվտանգության բաժինների պետեր</p>	<p>Ապահովում են բնապահպանական, առողջապահական և տեխնիկական անվտանգության կառավարման համակարգի ներդրումը, իրականացումն ու պահպանումը՝ համաձայն OHSAS 18001 և ISO 14001 պահանջների:</p> <p>Ապահովում են բնապահպանական, առողջապահական և տեխնիկական անվտանգության կառավարման համակարգի գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը ղեկավար անձնակազմին և ընդունված կառավարման համակարգի շարունակական բարելավման համար դրանց օգտագործումը</p> <p>Համակարգում և մոնիտորինգի են ենթարկում կառավարման համակարգի առաջընթացը</p> <p>Բացահայտում են խնդիրները և ըստ անհրաժեշտության նախաձեռնում ուղղիչ և կանխարգելիչ գործողություններ</p>

Պատասխանատու	Գործառույթ
	Առաջընթացի և խնդիրների վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում ղեկավարությանը՝ վերլուծելով իրավիճակն ու առաջարկելով անհրաժեշտ փոփոխություններ
Բնապահպանական և տեխնիկական անվտանգության բաժինների աշխատակիցներ	Ապահովում են բնապահպանական և տեխնիկական անվտանգության կառավարման համակարգերի գործունեությունը Վերահսկում են գործող օրենսդրությանը համապատասխանությունը Մշակում են գործունեության չափանիշներ Կազմում են հաշվետվություններ բնապահպանական, առողջապահական և տեխնիկական անվտանգության բնագավառում գործունեության և առկա խնդիրների վերաբերյալ
Բժշկական սպասարկման ծառայության ղեկավար (ավագ բուժքույր)	Ապահովում է բժշկական սպասարկման ծառայության բնականոն գործունեությունը Կատարում է վերլուծություններ, կազմում և ներկայացնում հաշվետվություններ առողջապահական բնագավառում առկա վիճակի և խնդիրների վերաբերյալ
Բոլոր ղեկավարները	Ապահովում են բնապահպանական, տեխնիկական անվտանգության և բժշկական սպասարկման ծառայությունների առջև դրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ օժանդակություն (այդ թվում՝ համարժեք ռեսուրսների հատկացում)
Անձնակազմի բոլոր անդամները	Ապահովում են ISO 14001 և OHSAS 18001 կառավարման համակարգերի շրջանակում իրենց գործառույթների և պարտականությունների անթերի կատարումը Օժանդակում են ընկերության ղեկավարությանն ու բնապահպանական, առողջապահական ու տեխ. անվտանգության ծառայությունների ներկայացուցիչներին՝ կառավարման համակարգերի գործունեությունն անխափան և պատշաճ իրականացնելու գործում